# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Տավուշի մարզ, գ. Նորաշեն, (0267) 07265, (077) 989028, norashen.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 4-Ն

## ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Որոշում է

Նորաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 19-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցում կատարել փոփոխություն և ծախսերը ըստ եռամսյակների նախատեսել՝

1-ին եռամսյակ - 100,0 հազար ՀՀ դրամ,

2-րդ եռամսյակ - 100,0 հազար ՀՀ դրամ,

3-րդ եռամսյակ - 600,0 հազար ՀՀ դրամ,

4-րդ եռամսյակ - 1853,0 հազար ՀՀ դրամ:

2. 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի նախահաշվի 4891 հոդվածից 100,0 /մեկ հարյուր/ հազար ՀՀ դրամ տեղափոխել ընդհանուր բնույթի նախահաշվի մասնագիտական ծառայություններ 4241 հոդվածին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՍԵՆ

2. ԱՎԵՏՅԱՆ ՍԼԱՎԻԿ

3. ԱՎՍԹՅԱՆ ԱՐՏԱԿ

4. ԱՎԱԳՅԱՆ ԵՐԵՄ

5. ԵՍԱՅԱՆ ՌՈԼԱՆԴ

6. ԽԱՆԱՂՅԱՆ ԻՇԽԱՆ

7. ՍԱՅԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նորաշենի համայնք
ՀՀ Տավուշի մարզ, գ. Նորաշեն, (0267) 57265, (077) 989028, norashen.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
23 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 5

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ,,Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց,, փակ բաժնետիրական ընկերությանը հողամասեր օտարելու մասին ՀՀ կառավարության 20 հունվարի 2016թ. թիվ 34-Ա որոշումը, համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ համայնքի սեփականություն համարվող, թիվ 10 /տասը/ փողոց, թիվ 28 /քսանութ/ հասցեում գտնվող 0,00491 հա հողամասը (ծածկագիրը 11-048-0126-0026, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի) ուղղակի վաճառքի ձևով օտարել ՙՙՀայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց՚՚ փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի իրականացման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 7070 /յոթ հազար յոթանասուն/ ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԵՐԱՅՄՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱԿՍԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԱՎԱԳՅԱՆ ԵՐԵՄ

5. ԵՍԱՅԱՆ ՌՈԼԱՆԴ

6. ԽԱՆԱՂՅԱՆ ԻՇԽԱՆ

7. ՄԱՅԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ